Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ ՈՒ Ն ❗ ❗
Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջի 7-րդ դասարանից սկսած 2026 -2027թթ. ուսումնական տարվա ընդունելության

ՄԱՐԶԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՆԵՐ ⚽🥊🏋️🤼🥋🏊
1.Բռնցքամարտ
2.Հունահռոմեական ըմբշամարտ
3.Ազատ ըմբշամարտ
4.Ձյուդո-սամբո ըմբշամարտ
5.Ծանրամարտ
6.Աթլետիկա
7.Սպ.ակրոբատիկա
8. Ֆուտբոլ
9. Սեղանի թենիս
10. Հեծանվային սպ.
11. Մարմնամարզ. և գեղ.մարմն.
12. Ձրային մարզաձևեր
13.Բասկետբոլ
14. Թաեքվանդո

📌Ընդունելությունը կատարվում է մրցութային կարգով:

ԵՕՀՊՄ քոլեջում ստեղծված են բոլոր անհրաժեշտ պայմաններն ուսման և շուրջամյա մարզումների համար: Կազմակերպվում են ամառային և ձմեռային մարզաառողջարարական ճամբարներ, ուսումնամարզական հավաքներ: Ուսանողները ապահովվում են սնունդով: Հեռավոր մարզերից ընդունվածներին հատկացվում է հանրակացարան:

📢Փաստաթղթերի ընդունում՝
🟥 2026թ. հուլիսի 1-ից մինչև օգոստոսի 18-ը ներառյալ ամեն օր / բացի շաբաթ և կիրակի օրերից/, ժամը 10: 00- 15:00 -ը:

📚Քննությունները՝
օգոստոսի 19-ին /Ընդհանուր ֆիզիկական պատրաստություն/- ժամը 10:00-ին ,
օգոստոսի 21-ին /Մասնագիտություն /- ժամը 10:00-ին:

🟥Ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը /թղթապանակի մեջ/:

1. Դիմում /լրացվում է տեղում/:
2. Երաշխավորագիր մարզադպրոցի կողմից՝ նշելով մարզական արդյունքները /հաստատված մարզադպրոցի կամ համայնքի համապատասխան մասնագետի կողմից/:
3. Երևան քաղաքի բնակիչները ներկայացնեն բժշկական տեղեկանք մարզական բժշկական ծառայությունից /հասցեն՝ Նոր-Նորքի 3-րդ զանգված, Գյուրջյան փող. 8, Գրիգոր Լուսավորիչ բ/կ, պոլիկլինիկայի 2-րդ հարկ 234 սենյակ/, իսկ մարզերի բնակիչները բժշկական տեղեկանք ներկայացնեն բուժծառայությունից՝ նեղ մասնագետներով անցած /ակնաբույժ, քիթ-կոկորդ, սրտաբան, նյարդաբան, վիրաբույժ, լաբորատոր քննություններ/:
4. Ծննդյան վկայականի պատճենը /2 հատ/:
5. Սոցքարտի պատճենը /2 հատ/:
6. Լուսանկար 6 հատ /3 X 4/:

7. Տեղեկանք բնակավայրից:
8. Առաջադիմության /փոխադրման տեղեկանք/ թերթիկ կամ հիմնական կրթության վկայական:
9. Մրցաշարերում գրված տեղերի հավաստագրերի պատճենները:

📪ԵՕՀՊՄ քոլեջի հասցեն՝ Երևան 32, Մանուկյան փող. 31
☎️Հեռախոս 010–77-14-77, 01077-34-00,
Ընդունող հանձնաժողով